

# ՌՈՒԴՈԼՖ ԽԱՉԱՏՐՅԱՆ

# Рудольф Хачатрян

1983



Ինքնադիմանկար 100×130 Автопортрет 100×130

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ՄԻՆԻՍՏՐՈՒԹՅՈՒՆ
ԵՐՔԱՂԿՈՄԻ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ԿՈՄԻՏԵ
ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԱՐՎԵՍՏԻ ԹԱՆԳԱՐԱՆ

МИНИСТЕРСТВО КУЛЬТУРЫ АРМЯНСКОЙ ССР
УПРАВЛЕНИЕ КУЛЬТУРЫ ИСПОЛКОМА ЕРГОРСОВЕТА
МУЗЕЙ СОВРЕМЕННОГО ИСКУССТВА

ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍԻ ԾՐԱԳԻՐ
КАТАЛОГ ВЫСТАВКИ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ՎԱՍՏԱԿԱՎՈՐ ՆԿԱՐԻՉ    ЗАСЛУЖЕННЫЙ ХУДОЖНИК АРМЯНСКОЙ ССР

# ՌՈՒԴՈԼՖ ԽԱՉԱՏՐՅԱՆ

# Рудольф Хачатрян

Մենք շատ ենք խոսում մարդու տեղի մասին
մեր ժամանակակից արվեստում,
սակայն, շատ քչերն են մարդու հանդեպ
դրսևորում այնպիսի սեր ու հարգանք,
ինչպես Խաչատրյանը։
Ինչպես ամեն մի արվեստագետ,
նա ևս ունի իր նախասիրությունները։
Նրան որպես մոդել գրավում են մտասույզ,
ստեղծագործ, արտիստական խառնվածքի անձնավորություններ։
Նա կարող է կազմակերպել մոդելի շուրջ փոքրիկ մի «տոնահանդես»,
շրջապատել նրան ֆանտաստիկ պարագաներով,
որոնք զարգացնում են կերպարը
և ստեղծում մարդու կատարյալ ու ամբողջական պատկեր,
որն ապրում է ոչ միայն իր աշխարհում,
այլ այն աշխարհում,
որտեղ պետք է ապրի մարդը՝ գեղեցկության և վեհության աշխարհում։

ԹԱԻՐ ՍԱԼԱԽՈՎ
ՍՍՀՄ ժողովրդական նկարիչ
ՍՍՀՄ Գեղարվեստի ակադեմիայի
իսկական անդամ

Մարդկանց հանդեպ ունեցած սերը,
կարեկցանքը, գթասրտությունը,
կոնկրետ սրտառուչ մասնակցությունն
իրեն շրջապատող մարդկանց ճակատագրերին,—
այս բոլորը միշտ էլ բնորոշ են եղել
Խաչատրյանի անձին և քիչ չափով չեն ազդել նրա ստեղծագործական
աշխարհընկալման վրա։
Խաչատրյանի համար
նկարելը երբեք չի վերածվել հրապուրանքի,
լինի դա թռուցիկ արված ճեպանկար,
թե երեսուն երկարատև սեանսներով
ստեղծված կտավ։
Դեպի սերն ու ճշմարտությունը
նա գալիս է տառապանքի ճանապարհով,
և չկա նրա համար
ավելի երջանկություն,
քան արարման,
ստեղծագործական տառապանքը։
Նկարչի զորությունը բնությանը միաձուլվելու մեջ է,
բնությանը գերազանցելու
փոքր իսկ ցանկություն չունենալու,
այլ ընդհակառակը՝ նրա բնական մասնիկը դառնալու մեջ։
Միայն սեփական

«ես»-ը մոռանալու դեպքում է հնարավոր ստեղծել կատարյալ,
վերանայման ու սրբագրության կարիք չունեցող գործ:
... Արվեստի յուրաքանչյուր գործիչ,
իր ընտրած գործունեության ոլորտի բնույթից անկախ,
հոգեհարազատություն է փնտրում դիտորդի հետ,
չէ՞ որ վերջին հաշվով
արվեստի ամեն մի լավագույն գործ
պատկանում է մարդկանց:
Այս առումով Խաչատրյանը երջանիկ է՝
նրա ստեղծագործական դիապազոնը այնքան լայն է,
որ ընդունակ է ներառնել իր մթնոլորտը ցանկացած դիտորդին:
Դա հատուկ է հազվագյուտ վարպետների,
նրանց գործերը իրենց արտաքին մատչելիությամբ իսկույն,
անմիջապես կախարդում են դիտորդին,
դյութում նրան,
ներգրավելով իրենց հարուցած խոհերի բարդ աշխարհը:

ՀԵՆՐԻԿ ԻԳԻԹՅԱՆ
ՀՍՍՀ արվեստի վաստակավոր գործիչ

Ռուդոլֆ Խաչատրյանի
արվեստի «միակ» թեման մարդն է:
Արտաքուստ չունենալով
իրականության հետ սովորական կենցաղային կապ,
ինչպես նաև որևէ առարկայական ֆոն
կամ պաճուճանքներ (որոշ բացառությամբ),
մարդը մեն-մենակ մնալով նկարչի հետ,
լիովին բացահայտում է սեփական ներաշխարհը:
Հասարակ մատիտով կատարած գծանկարը
ասես վերափոխվում է մի «մոգական բյուրեղի»,
ստեղծելով հետաքրքիր, հուզիչ պատմություն մարդու անձի,
նրա անկրկնելի անհատականության,
հոգևոր հարստության մասին:
Խաչատրյանի ամեն մի դիմանկարը
և նկարչի հուզիչ խոստովանություն է ժամանակի,
կյանքի խորը իմաստի ու նշանակության մասին,
և միաժամանակ պարունակում է խոր փիլիսոփայություն:
Խաչատրյանի հերոսը մարդն է
անցած հազարամյակների ֆոնի վրա,
որը նկարչի հետ միասին ինքն իր համար պարզաբանում է
հոգևոր հիմնական արժեքների մնայունության պրոբլեմը,
գեղեցիկի և բարու հավերժության պրոբլեմը:

ՄԻԽԱՅԻԼ ԼԱԶԱՐԵՎ
արվեստագետ

Ռուդոլֆ Խաչատրյանի
ստեղծագործությունը
նշանակալից երևույթ է դարձել
Մոսկվայի գեղարվեստական կյանքում:
Եթե հաշվի առնենք,
որ ճանաչում ստանալու միակ ճանապարհը ամենօրյա աշխատանքն է,
միացած վերին աստիճանի բարձր վարպետության
և սեփական գեղարվեստական մեթոդի ճշմարտացիության մեջ
ինչ-որ ֆանատիկ համոզվածություն ունենալու հետ,
ապա Ռուդոլֆ Խաչատրյանի ինքնահաստատումը որպես ինքնատիպ,
ոչ ոքի չնմանվող ստեղծագործողի՝ դառնում է էլ ավելի նշանակալից:
Ինձ, նկարիչ-ռեստավրատորիս և արվեստաբանիս,
վիճակված է գործ ունենալ
տարբեր դարաշրջանների,
երկրների,
դպրոցների և ոճերի նկարիչների կողմից
ստեղծված արվեստի գործերի հետ:
Կերպարվեստի ժամանակակից երևույթները գնահատելու գործում
որպես ելակետ ակամայից դառնում են
անցյալի հուշարձաններին վերաբերվող չափանիշները:
Եվ պետք է ասել,
որ Ռուդոլֆ Խաչատրյանի աշխատանքներն ունեն այն արժանիքները,
որոնք արդեն այսօր թույլ են տալիս դրանք կոչել թանգարանային:
Այս հիանալի գծանկարչի արվեստում ամեն ինչ խիստ մտածված է,
գիտակցված:
Ոչ մի ավելորդ, կեղծ էֆեկտավոր բան չի խախտում
Ռուդոլֆ Խաչատրյանի՝
Հայաստանի հողում ծնված և Ռուսաստանի սրտում իր ստեղծագործ աշխատանքը
շարունակող այս նկարչի արվեստի
դասական ներդաշնակությունն ու վարպետորեն մշակված ձեռագրի պարզությունը:

ՍԱՎԵԼԻ ՅԱՄՇՉԻԿՈՎ
ՌՍՖՍՀ արվեստի վաստակավոր գործիչ

... Ինչո՞ւ իր նատյուրմորտներում
նա այդպես մանրազնին է նկարում ամեն մի առարկա՝
եթե նուռ է,
ապա իր մակերեսի ողջ անհարթությամբ,
եթե կուժ է՝ բոլոր փոլվածքներով,
շորի կտորն աչք է զարնում իր ծոպերի ամեն մի խավամազիկով,
իսկ ավելն ասես պատրաստ է անցնելու իր պարտականություններին:
Նկարում չկա կենտրոն,
չկա եզրամաս:
Թե՞ ամեն ինչ կենտրոն է ու ամեն ինչ՝ եզրամաս:

... Նա գտնում է, որ կերպարվեստը սեր է։
Այն ամենը, ինչի վրա ընկել է նկարչի սիրող հայացքը,
վերածվում է թանկարժեք իրի։
Մեղվի համար միևնույն է,
թե որտեղից նեկտար հայթայթի՝ եղինջի ծաղկի՞ց,
թե՞ վարդից։
Մեղվի գործը հայթայթելն է,
նկարչինը՝ ներդնել։
Շորի կտորի ամեն մի մանրազնին նկարած խավամազիկը դառնում է
նկարչի սիրո ներդրման կետ և այդ իսկ պատճառով
կարևորություն է ձեռք բերում։
Եթե քամելու լինենք նկարչի պատկերած շորի կտորը
կամ դասական շալը,
ապա իրի արժեքը կքնորոշվի սիրո այն քանակով,
որը կծորա նրանից։

ՖԱԶԻԼ ԻՍՔԱՆԴԵՐ
գրող

...Պարզվում է՝ այս աշխարհում
«հասարակ մարդիկ» գոյություն չունեն։
Ուզում ես Ռուդոլֆ Խաչատրյանի
«գծանկարչության» պաթոսն անվանել հերոսական։
Այդպես էին պատկերում իրենց մոդելներին որմնանկարների
և կտավների վրա հինավուրց ժամանակների փառաբանված գեղանկարիչները։
Ես նույնպես,
նկարչի հետ միասին,
ուզում եմ հավատալ մարդու հերոսականությանը...
Նրա դիմանկարներում բոլորն ունեն առասպելական հերոսների
և ոգու ասպետների կերպարանք,
ինչպիսին որ են հենց մարդիկ՝ իրենց լավագույն օրինակներում,
միայն թե պետք է ավելի մեծ ուշադրությամբ զննել նրանց։
Ռուդոլֆ Խաչատրյանի հավատամքը մարդու բարձր,
հոգևոր ուժի ճանաչումն է,
որն աշխարհում իրավամբ գրավել է իր կայուն տեղը։
Դրանում է վարպետի հիմնական ուժը
և ոչ միայն գծանկարի հզոր դիկտանտում,
որին ենթարկվելն այնքան բերկրալի է։

ԱՐՍԵՆԻ ՏԱՐԿՈՎՍԿԻ
բանաստեղծ

Ստեղծագործական հասունությունն ու վարպետությունը
Ռուդոլֆ Խաչատրյանին դրդեցին փնտրել նոր նյութ,
որի օգնությամբ կկարողանար ավելի մեծ ուժով արտահայտել

իր խորը և բարդ աշխարհընկալումը։
Մատիտանկարի շրջանակներն սկսեցին նեղել նրա աշխարհազգացողությունը,
նրա գեղարվեստական մտածողության մասշտաբն
անխուսափելիորեն հանգեցնում էր գծանկարչության ավանդական հասկացության
կործանմանը։
Իր իսկական ազատությունը Խաչատրյանը ձեռք բերեց լևկասներում,
գրաֆիկայի համար այս նոր, անսպասելի նյութի մեջ։
Լևկասի գեղանկարչությունը վաղուց էր հայտնի։
Լևկասապատ տախտակների վրա նկարում էին դեռևս հին սրբանկարիչները։
Խաչատրյանն օգտագործեց լևկասը ոչ թե ներկերի,
այլ գծանկարի համար։
Նա սկսեց նկարել լևկասով պատած տախտակների վրա
և դրա շնորհիվ ձեռք բերեց կատարման վարպետություն՝
անհրաժեշտ որակապես նոր արժեքներ ստեղծելու համար։
Դժվար է հավատալ,
որ այդ բարդ,
լիալույս և բազմերանգ նկարները ստեղծված են միագույն գրաքարով։
Թվում է, թե ամեն մի հպումով նկարչի մատիտը բացազատում է
տախտակի խորքում թաքնված կյանքը։
Վարպետը վերջին տարիների իր աշխատանքներում
ապշեցնում է իր դասական ձևերի պարզությամբ
ու անհավատալի խտությամբ։
Խորհրդածելով պարզության գաղտնիքների շուրջ,
Միխայիլ Պրիշվինը գրել է իր օրագրերում.
«Հաճախ են ասում. «Նա պարզ զգեստ է հագնում»,
«Նա պարզ է գրում», և այլն։
Արվեստում և առօրյայում «պարզը»
նշանակում է ամենադժվարինը,
ամենաբացառիկը... «Պարզը» արվեստում սովորաբար նշանակում է
նկարչի նոր նվաճումը այն ձևի կատարելության մեջ,
որի վրա իրենից առաջ աշխատել են
մյուս նկարիչները և որը դարձել է
սովորական ու այժմ վերածնվում է նոր պայմաններում։
Այն պատճառով է այդ ձևը կոչվում «պարզ»,
որ հայտնի է բոլորին և այն պատճառով է դա հատկապես դժվարին,
որ պահանջում է նոր կատարելություն այն բանի,
ինչ մեծ վարպետներին թվացել է լիովին ավարտված»։
Խաչատրյանը չի կործանում գծանկարի հին ձևերը։
Նա վերցնում է գծանկարն ավարտուն ձևի մեջ,
որ հայտնի է մեզ Վերածննդի մեծագույն օրինակներում և վերակերտում է
նոր պայմաններում ու նոր որակի մեջ։

ԿԻՐԱ ՄԻԽԱՅԼՈՎՍԿԱՅԱ
գրող

Мы много говорим
о человеке
в нашем современном искусстве,
но редко кто поднимается до такой любви,
до такого уважения к человеку,
как Хачатрян.
Как и у всякого художника,
у него есть свои пристрастия.
Его привлекают в качестве моделей
люди
мыслящие, творческие, люди артистического склада.
Он может устроить вокруг модели небольшой «карнавал»,
окружить ее фантастическими аксессуарами,
развивающими образ,
создающими цельную и законченную картину человека,
живущего не просто в своем мире,
а в мире, в котором человек должен жить
— в мире красоты и благородства.

Таир САЛАХОВ
народный художник СССР,
действительный член Академии художеств СССР

Любовь к человеку,
сострадание,
доброта,
конкретное трогательное участие в судьбах людей,
окружающих художника,
— всегда характеризовали личность Хачатряна
и в немалой степени повлияли
на его художническое мировоззрение.
Творчество для Хачатряна никогда не превращалось в развлечение,
будь это быстрый,
десятиминутный набросок или левкас
продолжительностью в тридцать долгих сеансов.
К любви и истине
он идет через страдание,
и нет для него высшего счастья,
чем счастье творчества и созидания.
Сила — в слиянии с природой,
в отсутствии малейшего желания превзойти ее, напротив
— стать ее естественной частицей,
забыв собственное «я»,
— лишь тогда возможно создание вещи неприкасаемой,
недопускающей мысли о корректировке и ревизии.
...Каждый деятель культуры
независимо от характера и избранной им сферы деятельности
ищет контакта со зрителем,
в конечном итоге все лучшее,
что создается в искусстве,
принадлежит людям.
Хачатряну в этом смысле повезло,
амплитуда его творческого диапазона настолько широка,
что способна вовлечь в свою атмосферу любого зрителя.
Этим качеством
обладают редкие мастера:
привлекающие к своим произведениям внешней доступностью,

они моментально приковывают зрителя,
завораживают,
вовлекая в сложный мир своих раздумий.

Генрих ИГИТЯН
заслуженный деятель искусств
Армянской ССР

«Единственная» тема искусства Рудольфа Хачатряна
— человек.
Внешне лишенный привычных бытовых связей
с действительностью
и, вместе с этим,
каких-либо предметных фонов или аксессуаров (за редкими исключениями),
оставленный один на один с художником,
он полностью открывает свой внутренний мир.
Простой,
казалось бы, карандашный рисунок
преобразуется в «магический кристалл»,
создающий интересный волнующий рассказ
о личности человека,
его неповторимой индивидуальности,
духовной наполненности.
Каждый портрет Хачатряна
— это и волнующая исповедь самого художника
о времени,
о высоком смысле
и предназначении жизни,
это и глубокая философия.
Герой Хачатряна
— человек на фоне прошедших тысячелетий,
выясняющий для себя вместе с художником проблему
нестарения основополагающих духовных ценностей,
проблему вечности, красоты и добра.

Михаил ЛАЗАРЕВ
искусствовед

Творчество Рудольфа Хачатряна
стало приметным явлением в художественной жизни Москвы.
Если учесть,
что единственным путем к признанию был повседневный труд,
сочетающийся с высочайшего класса мастерством
и какой-то фанатической уверенностью
в правильности своего художественного метода,
утверждение Рудольфа Хачатряна как самобытного,
ни на кого не похожего творца становится еще более значимым и ощутимым.
Мне, художнику-реставратору
и искусствоведу,
приходится иметь дело с произведениями искусства,
созданными художниками различных эпох,
стран, школ и стилей.
Отправной точкой в оценке современных явлений
изобразительного искусства невольно становятся критерии,
применяемые к памятникам прошлого.
И должен сказать,
что работы Рудольфа Хачатряна имеют те качества,

которые уже сегодня позволяют именовать их музейными.
В творчестве прекрасного рисовальщика все строго продумано,
осознанно. Ничто лишнее,
псевдоэффектное не нарушает классическую гармонию
и ясность мастерского почерка Рудольфа Хачатряна
— художника, рожденного на земле Армении
и продолжающего свой созидательный труд в сердце России.

Савелий ЯМЩИКОВ
заслуженный деятель искусств РСФСР

...Оказывается, — «простых людей»
на свете не существует.
Хочется назвать пафос «графики» Рудольфа Хачатряна
героическим.
Так изображали свои модели прославленные живописцы
старсдавних времен на фресках и полотнах...
Мне тоже, вослед художнику,
хочется верить в героизм человека...
Все на его портретах выглядят героинями легенд
и рыцарями духа,
коими в лучших своих образцах и являются люди,
стоит только повнимательней к ним присмотреться.
Кредо Рудольфа Хачатряна
— в признании высокой духовной силы человека,
по праву занявшего центральное место
в мире.
В этом основная сила мастера,
а не только в мощном диктате рисунка,
которому так радостно подчиниться.

Арсений ТАРКОВСКИЙ
поэт

Зрелость и мастерство
побудили Рудольфа Хачатряна
искать новый материал,
с помощью которого он мог с наибольшей силой выразить
свое глубокое и сложное понимание мира.
Рамки рисунка стали теснить его мироощущение,
масштаб его художественного мышления неизбежно приводил к разрушению
традиционного понятия графики.
Настоящую свободу Хачатрян обрел в левкасах,
новом, неожиданном для графики материале.
Живопись на левкасе известна давно.
На загрунтованных досках писали еще древние иконописцы.
Хачатрян использовал левкас
не для красок — для рисунка.
Он стал рисовать на досках,
крытых левкасом,
и так обрел технику, необходимую для качественно новых свершений.
Трудно поверить,
что эти сложные, многосветные и многоцветные картины
написаны одним графитом.
Кажется, что с каждым прикосновением карандаш художника
высвобождает жизнь,

таящуюся в глубине доски.
Мастер в работах последних лет
поражает простотой своих классических форм и невероятным аскетизмом.
Размышляя над тайнами простоты,
Михаил Пришвин писал в своих дневниках:
«Часто говорят:
«она просто одевается»,
«он просто пишет» и т. д.
В искусстве и в быту «простое» означает самое трудное,
самое редкое... «Простое» в искусстве
означает обыкновенно новое достижение художника
в совершенствовании той формы,
над которой работали до него другие художники,
которая стала привычной
и теперь возрождается в новых условиях.
Поэтому эта форма называется «простой»,
что знакома всем и потому она так особенно трудна,
что требует нового совершенствования того, что казалось великим мастерам
совершенно законченным».
Хачатрян не разрушает старые формы рисунка.
Он берет рисунок
в законченной форме,
знакомой нам в высочайших образцах Возрождения,
и преобразует в новых условиях и в новом качестве.

Кира МИХАЙЛОВСКАЯ
писатель

...Почему он в своих натюрмортах
так тщательно выписывает каждую вещь:
гранат, так гранат
со всеми шероховатостями своей поверхности,
кувшин, так кувшин
со всеми вмятинами,
тряпочка тоже красуется каждой ворсинкой своей бахромы
и веник выражает готовность приступить к своим обязанностям.
В картине нет центра, нет периферии.
Или все центр и все периферия?
...Он считает,
что художество
— это любовь.
Все, на что упал любящий взгляд художника,
превращается в драгоценность.
Пчеле все равно,
откуда доставать нектар,
из цветка крапивы или из розы.
Пчеле — достать.
Художнику — вложить.
Тщательно прорисованная ворсинка тряпки
превращается в место действия любви и потому приобретает важность.
Если выжать тряпку
или классическую шаль, написанную художником,
то ценность вещи определится количеством любви,
которая из нее вытечет.

Фазиль ИСКАНДЕР
писатель



Կիսադեմ 60×80 Профиль 60×80



Քարավան-բաշի 60×80    Караван-баши 60×80



Ֆ. Մ.-ի դիմանկարը 60×80 Портрет Ф. М. 60×80



Հենրիխ Իգիթյանի դիմանկարը 80×100 Портрет Генриха Игитяна 80×100



Մոկոն 100×130 Моко 100×130



Նկարչուհի Իննա Օլևսկայայի դիմանկարը 95×115

Портрет художницы Инны Олевской 95×115



Բնորդուհի 80×100 Натурщица 80×100



Նատյուրմորտ ինքնաեռով 80×100    Натюрморт с самоваром 80×100



Երեք ձուկ 80×100   Три рыбы 80×100



Մեծ նատյուրմորտ 95×115 Большой натюрморт 95×115

| | |
|---|---|
| **ՆԿԱՐԱՑԱՆԿ** | **КАТАЛОГ** |
| **1980 թ.** | **1980 г.** |
| 1. Մոդել նատյուրմորտով 80×100 | 1. Модель с натюрмортом 80×100 |
| 2. Տղամարդը բազկաթոռում 100× 130 | 2. Мужчина в кресле 100×130 |
| **1981 թ.** | **1981 г.** |
| 3. Ինքնադիմանկար 100×130 | 3. Автопортрет 100×130 |
| 4. Կնոջ դիմանկարը 100×130 | 4. Портрет жены 100×130 |
| 5. Որմնախորշ 100×130 | 5. Ниша 100×130 |
| 6. Արվեստանոցում, առավոտ 100×130 | 6. В мастерской, утро 100×130 |
| 7. Ծաղիկներ 100×130 | 7. Цветы 100×130 |
| 8. Վտարանդին 100×130 | 8. Изгнанник 100×130 |
| 9. Լիանան Հռոմից 80×100 | 9. Лиана из Рима 80×100 |
| 10. Էլդար Ռյազանովի դիմանկարը 80×100 | 10. Портрет Эльдара Рязанова 80×100 |
| 11. Նատյուրմորտ ինքնաեռով 80×100 | 11. Натюрморт с самоваром 80×100 |
| 12. Երեք ձուկ 80×100 | 12. Три рыбы 80×100 |
| 13. Բնորդուհի 80×100 | 13. Натурщица 80×100 |
| 14. Նատյուրմորտ ձկով 60×80 | 14. Натюрморт с рыбой 60×70 |
| 15. Ֆ. Մ.-ի դիմանկարը 60×80 | 15. Портрет Ф. М. 60×80 |
| 16. Երիտասարդ իտալուհու դիմանկարը 60×80 | 16. Портрет молодой итальянки 60×80 |
| 17. Նատյուրմորտ շշերով 60×80 | 17. Натюрморт с бутылками 60×80 |
| **1982 թ.** | **1982 г.** |
| 18. Մոկոն 100×130 | 18. Моко 100×130 |
| 19. Մեծ նատյուրմորտ 95×115 | 19. Большой натюрморт 95×115 |
| 20. Պատուհանի առաջ 95×115 | 20. У окна 95×115 |
| 21. Հենրիխ Իգիթյանի դիմանկարը 80×100 | 21. Портрет Генриха Игитяна 80×100 |
| 22. Նատյուրմորտ «Արվեստ» 80×100 | 22. Натюрморт «Искусство» 80×100 |
| 23. Կիսադեմ 60×80 | 23 Профиль 60×80 |
| 24. Քարավան-բաշի 60×80 | 24. Караван-баши 60×80 |
| 25. Մերկուցցո 50×60 | 25. Меркуццо 50×60 |
| 26. Կանացի դիմանկար 50×60 | 26. Женский портрет 50×60 |
| 27. Արվեստաբան Սավելի Յամշչիկովի դիմանկարը 50×60 | 27. Портрет искусствоведа Савелия Ямщикова 50×60 |
| 28. Հոգեբույժ Գ. Նազլոյանի դիմանկարը 50×60 | 28. Портрет психиатра Г. Назлояна 50×60 |
| **1983 թ.** | **1983 г.** |
| 29. Նկարչուհի Իննա Օլևսկայայի դիմանկարը 95×115 | 29. Портрет художницы Инны Олевской 95×115 |
| 30. Նատյուրմորտ հայելիով 95×115 | 30. Натюрморт с зеркалом 95×115 |
| 31. Աղջիկը խնձորներով 95×115 | 31. Девушка с яблоками 95×115 |

32. Դերասանուհի 95×115
33. Ինքնադիմանկար 60×80
34. Ակադեմիկոս Ա. Միգդալի դիմանկարը 50×60
35. Լևոն Աբրահամյանի դիմանկարը 50×60
36. Նանա 50×60
37. Դերասան Վ. Մսրյանի դիմանկարը 50×60
38. Նատյուրմորտ վարդերով 50×60
39. Նատյուրմորտ ձկով և շշով 50×60
40. ՍՍՀՄ ԳԱ թղթակից անդամ Լևոն Փիրուզյանի դիմանկարը 50×60

**«ՀԱՅԱՍՏԱՆ» ՆԿԱՐԱՇԱՐՔ**

41. Հին Երևանը 70×80
42. Հին Երևան. փողոց 80×100
43. Հին Երևան. փոքրիկ բակ 80×100
44. Հին Կոնդը 70×80
45. Ամասիա 70×80
46. Գեղամա լեռներ 80×100
47. Հին փողոց 70×80
48. Պատշգամբ 70×80
49. Փողոց աղբյուրով 70×80
50. Փոքրիկ բակ 80×100

Աշխատանքները կատարված են սեպիա գրաֆիտով լևկասի վրա:

32. Актриса 95×115
33. Автопортрет 60×80
34. Портрет академика А. Мигдала 50×60
35. Портрет Левона Абрамяна 50×60
36. Нана 50×60
37. Портрет актера В. Мсряна 50×60
38. Натюрморт с розами 50×60
39. Натюрморт с рыбой и бутылкой 50×60
40. Портрет члена-корреспондента АН СССР Льва Пирузяна 50×60

**Цикл «Армения»**

41. Старый Ереван 70×80
42. Старый Ереван, улица 80×100
43. Старый Ереван, дворик 80×100
44. Старый Конд 70×80
45. Амасия 70×80
46. Гегамские горы 80×100
47. Старая улица 70×80
48. Балкон 70×80
49. Улица с колонкой 70×80
50. Внутренний дворик 80×100

Работы выполнены в технике левкаса, графита, сепии.

Պատվեր 2250, տպաքանակ 1000: ՀԿԿ Կենտկոմի հրատարակչության տպարան:

# ПНШ

1983